Կազմված է 24.11.2023թ.

Հաստատված է

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

24.11.2023 թվականի
հերթական 6-րդ համաժողովում

ՆԱԽԱԳԱՀ՝ ԷԴԳԱՐ ՉԱԽՈՅԱՆ

Տպագրված է ընդամենը երկու օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
04.03.2002թ.
Գրանցման համար 211.190.00621
Վկայական 03Ա053897
ՀՎՀՀ 01507414
24.12.2018թ. գրանցված կանոնադրության
թիվ 001.2 փոփոխությունը գրանցված է
ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 26 12
2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(Նոր խմբագրություն)

ԵՐԵՎԱՆ 2023

ԳԼՈՒԽ 1

Ընդհանուր դրույթներ

Հոդված 1

1. Երևանի պետական համալսարանի արհեստակցական կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) Երևանի պետական համալսարանի ֆակուլտետների, կենտրոնների, ինստիտուտների, մյուս կառուցվածքային ստորաբաժանումների և մասնաճյուղ/եր/ի (այսուհետ՝ ԵՊՀ) աշխատողների (այսուհետ՝ աշխատող) կամավոր միավորում է, որը ստեղծվում է նրանց գործունեությունը համակարգելու, ընդհանուր շահերը արտահայտելու և պաշտպանելու անհրաժեշտությամբ:
2. Կազմակերպությունը Երևանի պետական համալսարանում (այսուհետ՝ գործատու) և երրորդ անձանց մոտ ներկայացնում է կազմակերպության անդամների կամքը, հանդես է գալիս որպես անդամների օրինական ներկայացուցչական մարմին՝ գործատուի և երրորդ անձանց մոտ, որպես նրանց աշխատանքային, մասնագիտական, տնտեսական ու սոցիալական իրավունքները և այլ շահերը պաշտպանող ու ներկայացնող կողմ:

Հոդված 2

Կազմակերպությունն անկախ է պետական մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, գործատուներից, այլ կազմակերպություններից և կուսակցություններից, նրանց հաշվետու չէ և նրանց կողմից վերահսկողության ենթակա չէ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հոդված 3

Կազմակերպությունը ինքնուրույն է որոշում իր կառուցվածքը, ընտրում ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններ, հրավիրում կոնֆերանսներ, համաժողովներ և ժողովներ, ղեկավար և մյուս մարմինների նիստեր, ստեղծում աշխատակազմ, կազմակերպում նրա աշխատանքը:

Հոդված 4

Կազմակերպությունը կարող է համագործակցել հանրապետության և օտարերկրյա արհեստակցական կազմակերպությունների և միավորումների հետ, անդամակցել արհեստակցական միություններին, միջազգային կազմակերպություններին, ինչպես նաև Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի բուհերի արհեստակցական

կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությանը վճարելով սահմանված անդամավճարները, կնքել համագործակցության համաձայնագրեր օտարերկրյա ոչ կառավարական, ոչ առևտրային կազմակերպությունների հետ:

Հոդված 5

Կազմակերպության գտնվելու վայրն է. Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Ալեք Մանուկյան 1, կենտրոնական մասնաշենք, 4-րդ հարկ, 411 սենյակ, հեռ. (010)-55-46-12, (060)-71-01-76, վեբ-կայք. www.ysutu.am:

Հոդված 6

Կազմակերպության անվանումն է՝

Հայերեն լրիվ՝ **Երևանի պետական համալսարանի արհեստակցական կազմակերպություն:**

Ռուսերեն լրիվ՝ **Профсоюзная организация Ереванского государственного университета.**

Անգլերեն լրիվ՝ **Trade union organization of Yerevan state university.**

ԳԼՈՒԽ 2

Կազմակերպության նպատակները, խնդիրներն ու իրավասությունները

Հոդված 7

Կազմակերպությունը ստեղծվում է իր անդամների աշխատանքային ու դրա հետ կապված տնտեսական, սոցիալական և այլ շահերն ու իրավունքները ԵՊՀ ղեկավարության (այսուհետ՝ գործատու) և (կամ) երրորդ անձանց մոտ ներկայացնելու և պաշտպանելու նպատակով:

Հոդված 8

Մասնակցել գործատուի և (կամ) երրորդ անձանց կողմից կազմակերպության անդամների աշխատանքային, սոցիալ-տնտեսական և իրավական շահերը շոշափող կանոնակարգերի մշակման աշխատանքներին:

Հոդված 9

Կազմակերպության անդամների աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական և այլ շահերն ու իրավունքները ներկայացնելու և պաշտպանելու նպատակով նախաձեռնել և կնքել կոլեկտիվ պայմանագիր գործատուի հետ, հսկողություն իրականացնել դրա կատարման ուղղությամբ:

Հոդված 10

Ուսումնասիրել և կիրառել արհեստակցական կազմակերպությունների աշխատանքային փորձը, կազմակերպել արհմիութենական ակտիվի ուսուցում:

Հոդված 11

Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան վերահսկել գործատուի կողմից աշխատանքային օրենսդրության և աշխատանքի պաշտպանության կանոնների պահպանումը:

Հոդված 12

1. Մշակել և իրականացնել կազմակերպության անդամների առողջարանային բուժման, հանգստի կազմակերպման, զբոսաշրջության, մշակութային և մարզական միջոցառումների ծրագրեր, իսկ սոցիալական խնդիրների լուծման նպատակով կազմակերպության կողմից ընդունված կանոնակարգերի համաձայն հատկացնել սոցիալական (դրամական) օգնություն:
2. Աջակցել ԵՊՀ ֆակուլտետների, ինստիտուտների, կենտրոնների, կառուցվածքային մյուս ստորաբաժանումների և մասնաճյուղ/եր/ի կողմից կազմակերպվող տարատեսակ մասնագիտական, մշակութային, սպորտային և այլ բնույթի միջոցառումների, ինչպես նաև գիտաժողովների կազմակերպմանը և իրականացմանը:

Հոդված 13

Օժանդակել սոցիալական համագործակցության զարգացմանը՝ կարևորելով սոցիալական գործընկերությունը՝ որպես շահերի հավասարակշռման, սոցիալական համերաշխության և հավասարության ապահովման, ինչպես նաև խնդիրների լուծման արդյունավետ եղանակների որոշման հիմնական միջոց:

Հոդված 14

Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն կանոնադրության պահանջներին համապատասխան՝ անկախության, ինքնակառավարման, օրինականության, ժողովրդավարության, համերաշխության, արհեստակցական միություններին մասնակցելու (անդամակցելու) կամավորության, այլ արհեստակցական կազմակերպությունների հետ իրավահավասարության, կոլեգիալության, հրապարակայնության սկզբունքներով:

ԳԼՈՒԽ 3

Կազմակերպության հիմնադրումը, կազմակերպությանը մասնակցելը (անդամակցելը), կազմակերպությունում մասնակցությունը (անդամակցումը) դադարեցնելը, կազմակերպության անդամների իրավունքներն ու պարտականությունները

Հոդված 15

Կազմակերպությունը հիմնադրվում է ԵՊՀ աշխատողների կողմից՝ կամավորության սկզբունքով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 16

1. Կազմակերպությանը մասնակցել (անդամակցել) կարող են բոլոր նրանք ովքեր ընդունում են սույն կանոնադրությունը: Կազմակերպությանը մասնակցելու (անդամակցելու) համար անհրաժեշտ է լրացնել արհկոմիտեի կողմից սահմանած դիմումի ձևը:
2. Կազմակերպությանը մուտքի վճարը չի սահմանվում (0(զրո) դրամ), իսկ անդամավճարի չափն ու գանձման ձևը սահմանվում է սույն կանոնադրության 52-րդ հոդվածով:

Հոդված 17

Կազմակերպությունում մասնակցությունը (անդամակցումը) դադարեցվում է.

1. Արհկոմիտեի կողմից սահմանած դիմումի ձևը լրացնելու միջոցով:
2. Սույն կանոնադրության պահանջները խախտելու դեպքում կազմակերպության կազմից հեռացվելու վերաբերյալ կազմակերպության նախագահի որոշմամբ,

3. Կազմակերպության գործունեության դադարեցման կամ լուծարման դեպքերում,

4. Գործատուի և կազմակերպության անդամի միջև աշխատանքային հարաբերությունների խզումը (աշխատանքային պայմանագրի լուծումը) հիմք չէ կազմակերպությունում մասնակցությունը (անդամակցումը) դադարեցնելու համար:

Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով կազմակերպության անդամի մասնակցությունը (անդամակցումը) դադարեցվում է միայն կազմակերպության անդամի կողմից կազմակերպությանը ունեցած ֆինանսական և գույքային բոլոր պարտքերը մարելուց հետո:

Հոդված 18

Կազմակերպության բոլոր անդամներն ունեն հավասար իրավունքներ և կրում են հավասար պարտականություններ, բացառությամբ << օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և արհկոմիտեի որոշումներով սահմանված դեպքերի:

Հոդված 19

Կազմակերպության անդամն իրավունք ունի.

1. Ընտրելու և ընտրվելու կազմակերպության ղեկավար մարմիններում սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:
2. Կազմակերպության ղեկավար մարմիններին ներկայացնել կազմակերպության գործունեությանը վերաբերվող փաստաթղթերի նախագծեր, առաջարկություններ, ստանալ դրանց վերաբերյալ որոշումներ:
3. Դիմել կազմակերպության ղեկավար մարմիններին՝ սույն կանոնադրության 7-րդ հոդվածով սահմանված անձանց մոտ իր իրավունքները և սոցիալ-տնտեսական շահերը ներկայացնելու և պաշտպանելու միջնորդությամբ:
4. Անմիջական մասնակցություն ունենալ կազմակերպության և գործատուի միջև կնքվող կոլեկտիվ պայմանագրի նախապատրաստման և դրա իրականացման աշխատանքներին:
5. Ստանալ կազմակերպության ղեկավար մարմիններից տեղեկատվություն նրանց աշխատանքային գործունեության մասին:
6. Մասնակցել կազմակերպության սույն կանոնադրության 12-րդ հոդվածով նախատեսված ծրագրերի մշակմանը:

7. Մասնակցել կազմակերպության այն ժողովներին, համաժողովներին, ղեկավար մարմինների նիստերին, որոնց ժամանակ քննարկվում է իր գործունեությունը կամ վարքագիծը:
8. Սահմանված կարգով օգտվել կազմակերպության ունեցվածքից, նյութական և դրամական միջոցներից:

Հոդված 20

Կազմակերպության անդամը պարտավոր է.

1. Կատարել սույն կանոնադրության պահանջները, ինչպես նաև սույն կանոնադրության շրջանակներում՝ կազմակերպության բարձրագույն և ղեկավար մարմինների բոլոր որոշումները:
2. Գործատուից ստացած աշխատավարձից, կազմակերպության կանոնադրության 52-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափով և ձևով կատարել ամենամսյա անդամավճար:
3. Ակտիվ մասնակցություն ունենալ կազմակերպության նպատակների և խնդիրների իրականացմանը:

ԳԼՈՒԽ 4

Կազմակերպության կառուցվածքը, կազմակերպության մարմինները

Հոդված 21

1. Կազմակերպության մարմիններն են՝ կազմակերպության համաժողովը, կազմակերպության կոմիտեն (այսուհետ՝ արհկոմիտե), նախագահը, կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը:
2. Համաժողովը կազմակերպության միակ բարձրագույն մարմինն է:
3. Արհկոմիտեն կազմակերպության միակ ղեկավար մարմինն է:
4. Կազմակերպության ղեկավար մարմնի կազմը հաստատվում է համաժողովի կողմից՝ հինգ տարի ժամանակով, իսկ վերստուգիչ հանձնաժողովը ընտրվում է համաժողովի կողմից՝ հինգ տարի ժամանակով:

Հոդված 22

Կազմակերպության կառուցվածքն ունի հետևյալ տեսքը՝



Հոդված 23

1. Կազմակերպության անդամները ստեղծում են կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումներ՝ բյուրոներ (այսուհետ՝ արհբյուրոներ)՝ որոնք անմիջականորեն ենթարկվում են արիկոմիտեին:
2. Արհբյուրոների անդամների, արհբյուրոների նախագահների և քարտուղարների ընտրությունների կազմակերպման կարգը հաստատում է արիկոմիտեն:

Հոդված 24

1. Կազմակերպության բարձրագույն մարմինը համաժողովն է, որի պատվիրակների ձևավորման կարգը հաստատում է արիկոմիտեն:
2. Յուրաքանչյուր հերթական համաժողով հրավիրվում է հինգ տարին մեկ անգամ:

Հոդված 25

Կազմակերպության արիկոմիտեի որոշումը՝ համաժողովի հրավիրման, օրակարգի, ժամկետի և անցկացման վայրի մասին ընդունվում է համաժողովի բացումից առնվազն 15 աշխատանքային օր առաջ, իսկ համաժողովի օրակարգը և օրակարգին վերաբերող նյութերը պատվիրակներին առաքվում է արհբյուրոների նախագահների միջոցով համաժողովից առնվազն 7 աշխատանքային օր առաջ:

Հոդված 26

1. Բացառիկ դեպքերում արհկոմիտեի որոշմամբ և նախագահի հաստատմամբ հրավիրվում է արտահերթ համաժողով:

2. Արտահերթ համաժողովի հրավիրման, օրակարգի, ժամկետի և անցկացման վայրի մասին որոշվում է արտահերթ համաժողովի բացումից առնվազն 10 օր առաջ, իսկ արտահերթ համաժողովի օրակարգը և օրակարգին վերաբերող նյութերը պատվիրակներին առաքվում է արհբյուրոների նախագահների միջոցով համաժողովից առնվազն 4 աշխատանքային օր առաջ:

Հոդված 27

1. Համաժողովը համարվում է իրավազոր, եթե նրա աշխատանքներին մասնակցում է պատվիրակների կեսից ավելին: Համաժողովի որոշումները համարվում են ընդունված, եթե քվորումի առկայության դեպքում որոշման օգտին կողմ քվեարկում են նիստին մասնակցած պատվիրակների կեսից ավելին:
2. Քվեարկության կարգը (բաց կամ փակ (գաղտնի)) որոշում է համաժողովը:

Հոդված 28

1. Արհկոմիտեի նիստ հրավիրում է նախագահը, տարեկան առնվազն երկու անգամ, բայց ոչ ուշ, քան 6 ամիսը մեկ անգամ, և իրավազոր է, եթե նրա աշխատանքներին մասնակցում է արհկոմիտեի անդամների ոչ պակաս, քան երկու երրորդը, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ կետի, 4.2 ենթակետի:
2. Արհկոմիտեի որոշումներն ընդունվում են, եթե քվորումի առկայության դեպքում որոշման օգտին քվեարկում են նիստին մասնակցած արհկոմիտեի անդամների պարզ մեծամասնությունը, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ կետի 4.3 ենթակետի:
3. Քվեարկության ձևը /բաց կամ փակ /գաղտնի// որոշում է արհկոմիտեն, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ կետի 4.3 ենթակետի:
4. Կազմակերպության նախագահի անվստահության հարցը քննարկելու համար պետք է հրավիրել արհկոմիտեի արտահերթ նիստ:
   4.1. Նախագահի անվստահության համար արտահերթ նիստ կարող է հրավիրվել արհկոմիտեի անդամների ցուցակային կազմի ոչ պակաս, քան ինը տասերորդի գրավոր պահանջով:

4.2. Նախագահի անվստահության համար հրավիրված արտահերթ նիստը իրավազոր է եթե նիստին մասնակցում են արհկոմիտեի անդամների ցուցակային կազմի ոչ պակաս, քան հինը տասերորդը:

4.3. Կազմակերպության նախագահի անվստահության հարցի, ինչպես նաև անվստահության հարցի հետ կապված ցանկացած որոշում համարվում է ընդունված եթե տվյալ որոշման օգտին կողմ են քվեարկել արհկոմիտեի անդամների ցուցակային կազմի ոչ պակաս, քան չորս հինգերորդը:

Հոդված 29

Համաժողովը.

1. Լսում է հաշվետու ժամանակահատվածում արհկոմիտեի և վերստուգիչ հանձնաժողովի կատարած աշխատանքների մասին հաշվետվությունները, ընդունում համապատասխան որոշումներ:
2. Ընդունում է արհեստակցական կազմակերպության կանոնադրությունը և վերստուգիչ հանձնաժողովի կանոնակարգը /նրանցում լրացումներն ու փոփոխությունները/:
3. Հաստատում է արհկոմիտեի գործունեության ծրագիրը:
4. Հաստատում է կազմակերպության ղեկավար մարմնի՝ արհկոմիտեի կազմը: Արհկոմիտեի կազմի մեջ մտնում են՝ կազմակերպության նախագահը, նախագահի տեղակալը /տեղակալները/ և քարտուղարը, ինչպես նաև կազմակերպության արհբյուրոյի նախագահները:
5. Կազմակերպության անդամներից ընտրում է 3 հոգուց բաղկացած վերստուգիչ հանձնաժողովի կազմը:
6. Որոշում է կայացնում կազմակերպության վերակազմակերպման և լուծարման մասին:
7. Ընդունում է որոշումներ, բանաձևեր, դիմումներ, հայտարարություններ:

Հոդված 30

Համաժողովների միջև ընկած ժամանակահատվածում կազմակերպության աշխատանքները ղեկավարում է արհկոմիտեն:

Հոդված 31

Արիկոմիտեն.

1. Հրավիրում է համաժողով:
2. Իրագործում է համաժողովի որոշումները, սույն կանոնադրության պահանջները:
3. Իր կազմից, բաց քվեարկությամբ ընտրում է նախագահ՝ հինգ տարի ժամկետով: Նախագահի ներկայացմամբ, կազմակերպության անդամներից, ընտրում է նախագահի տեղակալ /տեղակալներ/ և քարտուղար՝ հինգ տարի ժամկետով:
   3.1. Հերթական համաժողովից հետո, արիկոմիտեի առաջին նիստը, որը հրավիրվում է կազմակերպության նախագահ ընտրելու համար՝ վարում է արիկոմիտի անդամներից տարիքով ավագը, իսկ նիստի քարտուղարում է արիկոմիտի անդամներից տարիքով փոքրը:
   3.2. Կազմակերպության նախագահ է ընտրվում այն թեկնածուն ում օգտին քվեարկել են արիկոմիտեի անդամների ցուցակային կազմի չորս հինգերորդը: Նախագահ չընտրվելու դեպքում արիկոմիտեի որոշմամբ նախագահի ժամանակավոր պաշտոնակատար է ընտրվում նախագահի տեղակալը կամ տեղակալներից մեկը՝ մինչև նոր նախագահի ընտրվելը: Նախագահի տեղակալի կամ տեղակալներից մեկի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար ընտրվելու անհնարինության դեպքում արիկոմիտեի որոշմամբ նախագահի ժամանակավոր պաշտոնակատար է ընտրվում քարտուղարը՝ մինչև նոր նախագահի ընտրվելը: Քարտուղարի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար ընտրվելու անհնարինության դեպքում արիկոմիտեի որոշմամբ նախագահի ժամանակավոր պաշտոնակատար է ընտրվում արիկոմիտեի անդամներից մեկը՝ մինչև նոր նախագահի ընտրվելը:
   3.3. Կազմակերպության նախագահի տեղակալ /տեղակալներ/ և քարտուղար է ընտրվում նախագահի կողմից ներկայացված այն թեկնածուն ում օգտին քվեարկել են արիկոմիտեի անդամների ցուցակային կազմի կեսից ավելին:
   3.4. Կազմակերպության նախագահի ներկայացմամբ որոշում է ընդունում նախագահի տեղակալին /տեղակալներին/ և քարտուղարին հետ կանչել զբաղեցրած պաշտոններից:
4. Օրենքով սահմանված կարգով կազմակերպում է հավաքներ, գործադուլներ, մարզամշակութային և այլ հանրային միջոցառումներ:

5. Ընդունում է որոշումներ արիկոմիտեի ժամանակավոր կամ մշտական հանձնախմբերի ստեղծման մասին, հաստատում է նրանց աշխատակարգը և անվանական կազմերը:
6. Հաստատում է կազմակերպությանը մասնակցելու (անդամակցելու) և մասնակցությունը (անդամությունը) դադարեցնելու վերաբերյալ դիմումների ձևերը:
7. Հաստատում է կազմակերպության ֆինանսական հաշվետվության և ստուգումների արդյունքները:
8. Լսում և հաստատում է նախագահի տարեկան հաշվետվությունը, ընթացիկ հաղորդումները, ինչպես նաև արհբյուրոների նախագահների հաղորդումները՝ արիկոմիտեի որոշումների կատարման և տվյալ արհբյուրոյի գործունեության մասին:
9. Հսկողություն է իրականացնում կոլեկտիվ պայմանագիր կատարման ուղղությամբ:
10. Ձբաղեցրած պաշտոնից վաղաժամկետ հետ է կանչում նախագահին՝ սույն կանոնադրության 28-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն:
11. Սույն կանոնադրությամբ սահմանված մարմիններից բացի, սահմանում է կազմակերպության գործունեության համար անհրաժեշտ կառուցվածք:
12. Հաստատում է կազմակերպության արհբյուրոների անդամների, նախագահների և քարտուղարների ընտրությունների կազմակերպման և համաժողովի պատվիրակների ձևավորման կանոնակարգը:
13. Հաստատում է արիկոմիտեի պատվոգրի ձևը և դրա հանձման կարգը:
14. Հիմնադրում է արիկոմիտեի տպագիր մարմինը, նշանակում է տպագիր մարմնի գլխավոր խմբագրին:
15. Որոշում է ընդունում միջազգային և այլ կազմակերպություններում կազմակերպության անդամակցության մասին:
16. Համագործակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
17. Կազմակերպում է արհմիութենական ակտիվի ուսուցման աշխատանքները:
18. Որոշումներ է ընդունում կազմակերպության անդամներին ԵՊՀ պարգևների ներկայացնելու մասին:
19. Ընդունում է որոշումներ, բանաձևեր, դիմումներ, հայտարարություններ:
20. Իրականացնում է համաժողովի կողմից պատվիրակած այլ գործառույթներ:

Հոդված 32

Արհբյուրոներ

1. Արհբյուրոյի բարձրագույն մարմինը ժողովն է, որը հրավիրվում է ըստ անհրաժեշտության: Ժողովների միջև ընկած ժամանակահատվածում կառուցվածքային ստորաբաժանման գործունեությունը ղեկավարում է արհբյուրոն:
2. Ժողովը համարվում է իրավազոր, եթե նրա աշխատանքներին մասնակցում է ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանման արհբյուրոյի անդամների կեսից ավելին: Ժողովի որոշումները համարվում են ընդունված, եթե քվորումի առկայության դեպքում որոշման օգտին քվեարկում է ժողովի մասնակիցների պարզ մեծամասնությունը:

   Քվեարկության կարգը / բաց կամ փակ /գաղտնի/ / որոշում է ժողովը:

Հոդված 33

1. Արհբյուրոն սահմանված կարգով իր կազմից ընտրում է նախագահ և քարտուղար:
2. Արհբյուրոյի նախագահի և քարտուղար լիազորության ժամկետը հինգ տարի է:
3. Արհբյուրոն մասնակցում է կոլեկտիվում ծագած աշխատանքային և սոցիալական կոնֆլիկտների լուծմանը:
4. Ապահովում է ստորաբաժանման կոլեկտիվի անդամների մասնակցությունը արհկոմիտեի կողմից կազմակերպվող և անցկացվող միջոցառումներին:
5. Արհբյուրոյի նախագահը իրականացնում է
   1.1. կառուցվածքային ստորաբաժանման ընթացիկ գործունեության ղեկավարումը, պատասխանատվություն է կրում ժողովի, արհկոմիտեի և արհբյուրոյի որոշումների կենսագործման համար,
   1.2. արհկոմիտեի որոշումների իրազեկումը կառուցվածքային ստորաբաժանման անդամներին,
   1.3. կառուցվածքային ստորաբաժանման աշխատողների աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական շահերի և իրավունքների ներկայացումն ու պաշտպանումը:
6. ԵՊՀ գիտակրթական կառուցվածքային ստորաբաժանման (ֆակուլտետ, ինստիտուտ, կենտրոն, մասնաճյուղ) արհբյուրոյի նախագահը ի պաշտոնե պատվիրակված է համարվում տվյալ կառուցվածքային ստորաբաժանման գիտական խորհրդի կազմ:
7. Հաշվետու է կազմակերպության նախագահին, արհկոմիտեին և արհբյուրոյին:

Գլուխ 5

Կազմակերպության նախագահը, նախագահի տեղակալը (տեղակալները), քարտուղարը

Հոդված 34

Նախագահը, նախագահի տեղակալը /տեղակալները/ և քարտուղարը պատասխանատվություն են կրում համաժողովի և արհկոմիտեի որոշումների կենսագործման համար, ղեկավարում են արհկոմիտեի աշխատակազմի աշխատանքները, համակարգում են կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը:

Հոդված 35

Նախագահը.

1. Ընտրվում է արհկոմիտեի կողմից՝ հինգ տարի ժամկետով, ղեկավարում է կազմակերպության և արհկոմիտեի աշխատանքները և հանդիսանում է կազմակերպության ղեկավարը արհկոմիտեի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում:
2. Կազմակերպության նախագահի հրաժարականի, անվստահություն հայտնելու, անգործունակ ճանաչվելու կամ մահվան դեպքում նոր նախագահի ընտրությունը իրականացվում է սույն կանոնադրության 31-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանած կարգով:
3. Ընտրվելուց հետո չի կարող ԵՊՀ-ում զբաղեցնել որևէ ղեկավար պաշտոն և/կամ հանդիսանալ հիմնական աշխատող, բացառությամբ գիտամանկավարժական աշխատանքից: Ընտրվելուց հետո ոչ ուշ, քան երեսուն աշխատանքային օրվա ընթացքում սեփական դիմումի համաձայն ազատվում է ԵՊՀ գործատուի մոտ զբաղեցրած ղեկավար պաշտոնից և/կամ հիմնական աշխատանքից, բացառությամբ գիտամանկավարժական աշխատանքից:
4. Առանց լիազորագրի ներկայացնում և պաշտպանում է կազմակերպության և անդամների շահերը՝ սույն կանոնադրության 7-րդ հոդվածով սահմանված անձանց մոտ:
5. Կազմակերպության նախագահը ի պաշտոնե պատվիրակված է համարվում ԵՊՀ խորհրդի, գիտխորհրդի, ռեկտորատի, Հայաստանի արհմիությունների

կոնֆեդերացիայի խորհրդի, բուհերի արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության խորհրդի և նախագահության կազմ:

6. Համակարգում է կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքները, իր բացակայության դեպքում տեղակալին կամ քարտուղարին լիազորում է իրականացնել է որոշ գործառույթներ:
7. Կազմավորում է արհկոմիտեի աշխատակազմը, իրականացնում է նրա ղեկավարումը, հաստատում է աշխատակազմի աշխատակարգը, հաստիքացուցակը և աշխատավարձի չափը: Հաստիքացուցակում պարտադիր ներառվում են կազմակերպության գլխավոր հաշվապահի, իրավաբանի, արհկոմիտեի խորհրդականի հաստիքները:
8. Արձակում է հրամաններ արհկոմիտեի աշխատակազմում աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու մասին: Կնքում է աշխատանքային պայմանագրեր:
9. Ստորագրում է համաժողովի և արհկոմիտեի որոշումները:
10. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նախաձեռնում և կնքում է կոլեկտիվ պայմանագիր գործատուի հետ:
11. Տեղյակ է պահում արհկոմիտեին իր կողմից արված հայտարարությունների, բանակցությունների արդյունքների, ընդունած որոշումների մասին:
12. Տնօրինում է կազմակերպության գույքը և դրամական միջոցները, կնքում է պայմանագրեր, հանդիսանում է կազմակերպության վարկի կարգադրիչը:
13. Կատարում է աշխատանքի բաժանում նախագահի տեղակալի /տեղակալների/ և քարտուղարի միջև, որոշում է նախագահի տեղակալի /տեղակալների/ և քարտուղարի իրավասությունների և պարտականությունների սահմանները:
14. Որոշում է ընդունում արհկոմիտեի նիստի հրավիրման, նրա օրակարգի, անցկացման վայրի և ժամկետի մասին:
15. Վարում է կազմակերպության համաժողովի և արհկոմիտեի նիստերը:
16. Հաշվետու է արհկոմիտեին և համաժողովին:

Հոդված 36

Նախագահի տեղակալը (տեղակալները).

1. Ընտրվում է կազմակերպության նախագահի ներկայացմամբ՝ արհկոմիտեի կողմից:
2. Ընտրվելուց հետո կարող է սեփական դիմումի համաձայն ազատվել ԵՊՀ գործատուի մոտ զբաղեցրած պաշտոնից:

3. Իրագործում է կազմակերպության մարմինների որոշումները, նախագահի հանձնարարականները:
4. Կազմակերպում է աշխատակազմի, կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը:
5. Քննության է առնում կառուցվածքային ստորաբաժանումներից, այլ կազմակերպություններից ստացված փաստաթղթերը և ներկայացնում է նախագահին:
6. Նախապատրաստում է համաժողովի, արհկոմիտեի նիստերը, նախագահի կողմից հրավիրվող խորհրդակցությունների նյութերը:
7. Ապահովում է նախագահի կարգադրությունների և հրամանների ժամանակին, ամբողջությամբ կատարումը: Հաշվետու է միայն նախագահին:

Հոդված 37

Կազմակերպության քարտուղարը.

1. Ընտրվում է կազմակերպության նախագահի ներկայացմամբ՝ արհկոմիտեի կողմից:
2. Ընտրվելուց հետո կարող է սեփական դիմումի համաձայն ազատվել ԵՊՀ գործատուի մոտ զբաղեցրած պաշտոնից:
3. Նախապատրաստում է արհկոմիտեի նիստը:
4. Կազմում և ստորագրում է արհկոմիտեի նիստերի օրակարգը:
5. Տեղեկացնում է արհկոմիտեի անդամներին նիստի օրակարգի հարցերի մասին:
6. Ապահովում է արհկոմիտեի նիստերի հրապարակայնությունը:
7. Արհկոմիտեի նիստերի վերաբերյալ տալիս է պարզաբանումներ:
8. Ստորագրում է Արհկոմիտեի նիստերի արձանագրությունները:
9. Կազմակերպում է Արհկոմիտեի որոշումների ուղարկումն ըստ պատկանելիության:
10. Կազմակերպում է կազմակերպության ընտրական փաստաթղթերի ստացման, պահպանման և օրենքով սահմանված դեպքերում՝ արխիվացման աշխատանքները:
11. Նախագահի հանձնարարությամբ իրականացնում է վերջինիս վերապահված որոշակի լիազորություններ: Հաշվետու է միայն նախագահին:

Հոդված 38

1. Նախագահը, նախագահի տեղակալը /տեղակալները/ և քարտուղարն ի պաշտոնե արհկոմիտեի անդամներ են, համաժողովի պատվիրակներ են:

1.1. Կազմակերպության գործող նախագահը պահպանում է իր անդամությունը նոր արհկոմիտեի կազմում մինչև նախագահի նոր ընտրություններ: Չվերընտրվելու դեպքում դադարեցվում է նրա անդամությունը արհկոմիտեի կազմում:

1.2. Կազմակերպության նախագահի տեղակալը /տեղակալները/ և քարտուղարը պահպանում է իրենց անդամությունը նոր արհկոմիտեի կազմում մինչև նախագահի տեղակալի /տեղակալների/ և քարտուղարի նոր ընտրություններ: Չվերընտրվելու դեպքում դադարեցվում է նրանց անդամությունը արհկոմիտեի կազմում:

Հոդված 39

1. Կազմակերպության նախագահի իրավասությունների ժամկետը լրանալու կամ պաշտոնում չվերընտրվելու կամ պաշտոնավարումը վաղաժամկետ դադարելու պատճառով աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում կազմակերպությունը ապահովում է պաշտոնաթող նախագահի իրավական և սոցիալական պաշտպանվածությունը մեկ տարի ժամկետով, բացառությամբ կազմակերպության նախագահին անվստահություն հայտնելու պատճառով աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքի:

1.1. Կազմակերպության պաշտոնաթող նախագահի սոցիալական պաշտպանվածությունը ապահովելու նպատակով, աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում (բացառությամբ կազմակերպության նախագահին անվստահություն հայտնելու պատճառով աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքի), կազմակերպությունը պաշտոնաթող նախագահին տալիս է դրամական պարգևատրում /պարգևավճար/: Դրամական պարգևատրումը /պարգևավճարը/ կազմում է կազմակերպության պաշտոնաթող նախագահի վերջին ամսվա աշխատավարձի և կազմակերպության նախագահի պաշտոնում աշխատած տարիների թվերի արտադրյալը: Կազմակերպությունը պաշտոնաթող նախագահի պարգևատրումը /պարգևավճարը/ վճարվում է աշխատանքային պայմանագիրը լուծվելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ համաձայնեցնելով վճարման պարբերականությունը:

Գլուխ 6

Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը

Հոդված 40

Վերստուգիչ հանձնաժողովը վերահսկում է կազմակերպության ղեկավար մարմինների կողմից սույն կանոնադրության պահանջների կատարումը, կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեությունը, արհբյուրոների կողմից արհկոմիտեի որոշումների կատարումը, արհկոմիտեի աշխատակազմում գործերի վարման, հաշվապահական հաշվառման, ֆինանսական և վիճակագրական հաշվետվությունների ճշտությունը, անդամավճարի մուտքերը, հսկողություն է իրականացնում կոլեկտիվ պայմանագրի կատարման ուղղությամբ:

Հոդված 41

Վերստուգիչ հանձնաժողովը ինքնուրույն է իր գործողություններում, ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և հաշվետու է միայն համաժողովին:

Հոդված 42

Վերստուգիչ հանձնաժողովի կազմում չեն կարող ընդգրկվել կազմակերպության ղեկավար մարմնի անդամները և աշխատակազմի աշխատողները:

Հոդված 43

Վերստուգիչ հանձնաժողովի լիազորությունները վավերական են արհկոմիտեի գործունեության ամբողջ ժամանակահատվածի համար (հինգ տարի):

Հոդված 44

Վերստուգիչ հանձնաժողովի անդամները և նախագահն ի պաշտոնե համաժողովի պատվիրակ են: Վերստուգիչ հանձնաժողովի նախագահը խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել արհկոմիտեի նիստերի աշխատանքներին:

Հոդված 45

1. Վերստուգիչ հանձնաժողովը առաջին նիստում իր կազմից ընտրում է նախագահ, որը կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքները:

2. Վերստուգիչ հանձնաժողովի նիստերն անց են կացվում ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ: Մինչև կազմակերպության համաժողովը անց է կացվում առանձին վերստուգում:

Հոդված 46

Վերստուգիչ հանձնաժողովը իր գործունեության մասին հաշվետվություն է ներկայացնում կազմակերպության համաժողովին: Հանձնաժողովը առանձին վերստուգումների արդյունքների մասին հաղորդումներով հանդես է գալիս նաև արհկոմիտեի նիստերում: Հանձնաժողովի որոշումները պարտադիր են արհկոմիտեի և կազմակերպության նախագահի համար և ենթակա են կատարման հանձնաժողովի կողմից նշված ժամկետում:

Հոդված 47

Վերստուգիչ հանձնաժողովի նիստը իրավազոր է, եթե նրա աշխատանքներին մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են նիստին մասնակցած հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Քվեարկության կարգը որոշում է հանձնաժողովը:

Հոդված 48

Վերստուգիչ հանձնաժողովի գործունեության հետ կապված բոլոր ծախսերը կատարվում է կազմակերպության հաշվին:

Գլուխ 7

Կազմակերպության իրավունակությունը

Հոդված 49

Կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ պետական գրանցման պահից:

Հոդված 50

Կազմակերպությունն ունի խորհրդանշան:

Կազմակերպության խորհրդանշանն է. վերևի մասում պատկերված է Արարատ լեռը՝ որը խորհրդանշում է պետականությունը, մեջտեղում պատկերված է ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի դիմային մասը՝ որը խորհրդանշում է գիտական միտքը, իսկ ներքևում պատկերված է երկու ձեռքերի ձեռքսեղմում՝ որը խորհրդանշում է համալսարանական համերաշխությունն ու սոցիալական գործընկերությունը: Այս բոլորը վերցված է շրջանակի մեջ՝ որն էլ խորհրդանշում է այդ երեք գաղափարների միասնությունը:

Հոդված 51

Կազմակերպությունն ունի իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքները և կրում է համապատասխան պարտավորություններ:

Կազմակերպությունն ունի հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով իր անվանմամբ և իր խորհրդանշանով կլոր կնիք և դրոշմակնիք:

Գլուխ 8

Կազմակերպության սեփականությունը և ֆինանսական գործունեությունը

Հոդված 52

1. Կազմակերպության սեփականությունը գոյանում է կազմակերպության անդամների մուտքի վճարներից, անդամավճարներից, կազմակերպության կամ նրա մասնակցությամբ հիմնադրամի, տնտեսական ընկերությունների և ընկերակցությունների մուծումներից, կամավոր ներդրումներից, իրավաբանական և ֆիզիկական անձանց նվիրատվություններից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:
2. Կազմակերպության անդամների անդամավճարը սահմանվում է.

   գործատուից ստացած կազմակերպության յուրաքանչյուր անդամի աշխատավարձի /հիմնական աշխատավարձ, լրացուցիչ աշխատավարձ՝ հավելումներ, հավելավճարներ, լրավճարներ, պարգևատրումներ և այլն\ առնվազն 1 (մեկ) տոկոսը:

Գործատուն կազմակերպության յուրաքանչյուր անդամի աշխատավարձից գանձում է 1 (մեկ) տոկոս անդամավճարը և կենտրոնացված կարգով այն փոխանցում է կազմակերպության բանկային հաշվարկային հաշվին:

Հոդված 53

Կոլեկտիվ պայմանագրին և/կամ համաձայնագրին համապատասխան.

1. Կազմակերպությունը գործատուից կարող է ստանալ ֆինանսական միջոցներ աշխատողների աշխատանքի և հանգստի պայմանների բարելավման, նրանց առողջության պահպանման, մշակութային, մարզական, մասնագիտական և այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով:
2. Կազմակերպությունը իր ամենօրյա գործունեությունը պատշաճ կազմակերպելու համար, գործատուի կողմից՝ ԵՊՀ կենտրոնական մասնաշենքում, անհատույց և անժամկետ ստանում է պատշաճ վերանորոգված, գույքով կահավորված, հեռախոսակապով, ինտերնետ ցանցով և այլ տեխնիկայով (տեխնիկան ըստ անհրաժեշտության պարբերաբար թարմացվում է) հագեցած աշխատասենյակներ, ինչպես նաև նիստեր ու համաժողովներ անցկացնելու համար սրահներ և դահլիճներ:

Հոդված 54

Կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում և հաստատվում է արիկոմիտեի նիստում՝ օրացույցային տարվա ավարտից հետո, առաջին եռամսյակի ընթացքում: Տարեկան ֆինանսական հաշվետվությունը ներկայացնում է նախագահը:

Հոդված 55

Կազմակերպությունը ունի բանկային հաշիվներ, այդ թվում՝ արտարժութային:

Գլուխ 9

Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը

Հոդված 56

Կազմակերպության վերակազմակերպումը իրականացվում է համաժողովի որոշմամբ, օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով:

Կազմակերպության վերակազմավորում չի թույլատրվում:

Հոդված 57

Կազմակերպության լուծարումը տեղի է ունենում օրենքով, կամ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

Լուծարման մասին որոշում ընդունելուց հետո կազմակերպությունը պարտավոր է հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղյակ պահել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը:

Հոդված 58

Կազմակերպությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին կազմակերպությունը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է կազմակերպության սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆ

46
23 թերթ